




ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԱՆՃԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



- Ապահովագրված անձը զանգահարում է 24/7/365 համակարգով աշխատող զանգերի կենտրոնի հեռախոսահամարով:
- Զանգերի կենտրոնը կապ է հաստատում բժիշկ-փորձագետների հետ և վերջիններս՝
 - ✓ կտրամադրեն հատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն,
 - ✓ կտան հայտերի կարգավորման հետ կապված բոլոր հարցերի պատասխաններ,
 - ✓ անհրաժեշտության դեպքում կօգնեն ընտրել բուժհաստատություն,
 - ✓ անհրաժեշտության դեպքում կգրանցեն ընդունելություն համապատասխան մասնագետի մոտ,
 - ✓ կհետևեն բուժհաստատությունների կողմից մատուցվող ծառայությունների որակին և գիտական առումով նպատակահարմարությանը:
- 1-03 և 8-119 շտապ կամ անհետաձգելի բժշկական օգնության դիմելու դեպքում Ապահովագրված անձը կամ նրա հարազատը պետք է պատահարի մասին տեղեկացնի Ապահովագրողին առաջին իսկ հնարավորության դեպքում: Ապահովագրված անձը կարող է՝
 - **ՏԱՐԲԵՐԱԿ** 1. Դիմել «Նաիրի Ինշուրանս»-ի հետ համագործակցող բուժհաստատություն, որի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է բուժհաստատությանը՝ ազատելով ապահովագրված անձին վճարումներ կատարելու պարտականությունից:
 - **ՏԱՐԲԵՐԱԿ** 2. Դիմել «Նաիրի Ինշուրանս»-ի հետ համագործակցության պայմանագիր չունեցող բուժհաստատությանը և ստանալով բուժօգնություն, եռամսյա ժամկետում, կատարած վճարումները փաստող դրամարկղային կտրոնները և (կամ) սահմանված ձևի հաշիվները, ստացած ծառայությունների ցանկը, բժշկի եզրակացրած ախտորոշումը (Էպիկրիզ) ներկայացնել «Նաիրի Ինշուրանս»-ին և լրացնել սահմանված ձևի դիմում՝ ծախսերի հատուցման նպատակով: Ապահովագրական պահանջի կարգավորման դրական եզրակացության դեպքում ապահովագրական հատուցման գումարը վճարվում է Ապահովագրված անձին ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը «Նաիրի Ինշուրանս»-ին ներկայացնելու պահից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Ապահովագրական պահանջի մերժման դեպքում համապատասխան եզրակացությունը կազմվում և Ապահովագրված անձին է տրամադրվում /ուղարկվում/ ապահովագրական պահանջի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալու պահից 5-օրյա ժամկետում և այն կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: